ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

30.09.2013 20:44

Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության համատեղ ծրագիր՝ «Փաստաբանների և իրավապաշտպանների կարողությունների ամրապնդումը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի (ՎԵՍԽ) ներպետական կիրառման նպատակով»:

Հարգելի փաստաբաններ,

«Փաստաբանների և իրավապաշտպանների կարողությունների ամրապնդումը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի (ՎԵՍԽ) ներպետական կիրառման նպատակով» Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության համատեղ ծրագրի շրջանակներում կազմակերպվելու է 12-օրյա դասընթաց՝ վերապատրաստում վերապ-ատրաստողների համար (Training for Trainers): Նշված 12-օրյա դասընթացը բաղկացած է լինելու 6 մոդուլներից, այն է՝

1. Խտրականություն հասկացության ընդհանուր ներածություն ՄԻԵԿ-ի և ՎԵՍԽ-ի տեսանկյունից.
2. ՄԻԵԴ ներկայացված դիմումների ընդունելիությունը.
3. Խտրականության դեմ ոլորտի հարցեր (այս մասերը պետք է հիմնվեն ներկայումս HELP-ի ուսուցման ծրագրի համար նախապատրաստվող ուսուցման վրա).
4. Ատելության հիմքով հանցանքը կամ ատելության սերմանումը խտրականության համատեքստում.
5. Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան.
6. Ազգային և միջազգային մակարդակում ռազմավ-արական դատավարություններ:

Ամբողջ ծրագիրը ուսուցանվելու է չորս՝ եռօրյա վերապատրաստման նստաշրջանների միջոցով, որոնք անց են կացվելու ս.թ. հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր և հունվար ամիսներին: Արդյունքում՝ ազգային փորձագետների խումբ է ձևավորվելու, որոնք վերապատրաստման ծրագիրը փոխանցելու են ունկնդիրների այլ խմբերի՝ վերապատրաստողների վերապատրաստմանը հաջորդող մի շարք դասընթացների ընթացքում: Առաջին եռօրյա վերապատրաստման նստաշրջանը կազմակերպվելու է ս.թ. հոկտեմբերի 24-25-26-ին՝ Երևանում: 12-օրյա

դասընթացի ավարտին մասնակիցները պետք է քննություն հանձնեն: Քննության և բոլոր չորս նստաշրջանների հաճախելիության (որը պարտադիր է) արդյունքների հիման վրա հաջողակ մասնակիցներին Եվրոպայի խորհրդի կողմից կշնորհվեն վկայականներ:

Համապատասխան որակավորում ունեցող հավակնորդները կարող են դիմել դասընթացին ընդգրկվելու համար: Խնդրում ենք լրացնել կից ներկայացվող հայտի ձևաթուղթը և այն մինչև ս.թ. հոկտեմբերի 4-ը հետ ուղարկել arman_poghosian@yahoo.com հասցեին:

Լրացված հայտի թղթային տարբերակները չեն ընդունվելու, ուստի խնդրում ենք դրանք ուղարկել միայն էլեկտրոնային տեսքով:

Հավակնորդների ընտրությունը կատարվելու է Եվրոպայի խորհրդի և ՀՀ փաստաբանների պալատի կողմից համատեղ: Ծանուցվելու են միայն այն հավակնորդները, որոնք կմասնակցեն դասընթացին:

Դասընթացը չի ընկնելու պարտադիր վերապատրաստման ներքո, ուստի դրանում ընդգրկված փաստաբանները չեն ստանալու համապատասխան ժամեր:

Բեռնել հայտի ձևաթուղթը

Նախորդ նորությունը: ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հաջորդ նորությունը: ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ (PROFESSIONAL FELLOWS PROGRAM/PFP) ԾՐԱԳԻՐ

Առաջարկվող նորություններ

17.09.2013ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

09.10.2013ԱՎԱՐՏՎԵՑ «ՍՏՐԱՏԵԳԻԱՅԻ ԱՐՎԵՍՏԸ» ԹԵՄԱՅՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

30.09.2013«ՍՏՐԱՏԵԳԻԱՅԻ ԱՐՎԵՍՏԸ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

30.09.2013ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })